ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐ
SPECIAL TOPIC: PHARISEES

I. Այս տերմինը ունի հետևյալ հնարավոր ծագումներից որևէ մեկը՝
   Ա. «Առանձին լինել» Այս խումբը ձևավորվել է Մակաբայեցիների ժամանակաշրջանում: (Սա ամենալայն տարածում ունեցող տեսակետն է):
   Բ. «Բաժանել» Սա եբրայերեն միևնույն արմատի մեկ այլ նշանակությունն է: Ոմանք ասում են, որ դա նշանակում էր մեկնաբան՝ բացատրող (տես՝ 2 Տիմ.2:15):
   Գ. «Պարսիկ» Սա արամերեն միևնույն արմատի մեկ այլ նշանակությունն է: Փարիսեցիների որոշ վարդապետություններ շատ ընդհանրություններ ունեն պարսկական Զրադաշտականության դուալիզմի հետ:
II. Նրանք ձևավորվեցին Մակաբայեցիների Դարաշրջանում՝ *Hasidim* (կրոնավորներ) կոչվող մարդկանցից: Մի քանի տարբեր խմբեր, ինչպես Էսսենները, դուրս եկան հակահելլենական շարժումից՝ Անտիոքցի IV Էպիֆանեսի ժամանակ: Փարիսեցիների մասին առաջին անգամ նշվում է Ջոզեֆուսի *Հրեաների Հնությունները* 8.5.1-3 գրքում:
III. Նրանց հիմնական վարդապետությունները.
   Ա. Հավատում են գալիք Մեսիային, որը միջաստվածաշնչյան հայտնության գրականության ազդեցությամբ է՝ ինչպես 1 Ենովքի գիրքը:
   Բ. Աստված գործում է մեր ամենօրյա կյանքում: Սա ուղղակիորեն Սադուկեցիների վարդապետության հակառակն էր: Շատ փարիսեցիական վարդապետություններ հանդիսանում են Սադուկեցիների վարդապետությունների հակադրությունը:
   Գ. Երկրավոր կյանքի հիման վրա ֆիզիկապես կողմնորոշված հանդերձյալ կյանք, որը պարունակում է վարձրատրություն և պատիժ (տես՝ Դան. 12:2):
   Դ. ՀԿ-ի իշխանությունը և Բանավոր Ավանդույթները (*Talmud*): Նրանք գիտակցաբար հնազանդվում էին ՀԿ-ի Աստծո պատվիրաններին, քանի որ դրանք մեկնաբանվում և կիրառվում էին դպրոցների և ռաբբիական ուսուցիչների կողմից (Shammai – պահպանողական, և Hillel -ազատական): Ռաբբիական մեկնաբանությունները հիմնված են երկու տարբեր փիլիսոփայությունների պատկանող ռաբբիների միջև երկխոսությունների վրա, մեկը՝ պահպանողական, մյուսը՝ ազատական (լիբերալ): Այս բանավոր քննարկումները Սուրբ Գրքի խոսքերի նշանակությունների շուրջ վերջին հաշվով գրի են առնվում երկու տեսքով՝ Բաբելոնյան Թալմուդի և անավարտ Պաղեստինյան Թալմուդի: Նրանք հավատում էին, որ Մովսեսը ստացել էր այս բանավոր մեկնաբանությունները Սինա լեռան վրա: Այս քննարկումների պատմական սկիզբը դրվել է Եզրասի և «Մեծ Ժողովարանի» մարդկանց կողմից (հետագայում Սինեդրոն կոչվող):
   Ե. Ուժեղ ձևավորված հրեշտակագիտությունը: Սա ներառում էր բարի և չար հոգևոր էակներին: Սա ձևավորվեց պարսկական դուալիզմից և միջաստվածաշնչյան գրականությունից: